

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, եւ հաստատությունները դրա բովանդակության համար որեւէ պատասխանատվություն չեն կրում

►B

Բնական միջավայրերի եւ կենդանական ու բուսական աշխարհի վայրի տեսակների պահպանության մասին

(ՊՏ L 206, 22.07.1992թ., էջ 7)

Փոփոխված՝

		Պաշտոնական տեղեկագիր		
		թիվ	էջ	ամսաթիվ
M1	<u>Խորհրդի 1997 թվականի հոկտեմբերի 27-ի L 305 97/62/ԵՀ հրահանգով</u>		42	08.11.1997թ.
▼M2	<u>Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2003 L 284 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 1882/2003 (ԵՀ) կանոնակարգով</u>		1	31.10.2003թ.
▼M3	<u>Խորհրդի 2006 թվականի նոյեմբերի 20-ի L 363 2006/105/ԵՀ հրահանգով</u>		368	20.12.2006թ.

Փոփոխված՝

A1	<u>«Ավստրիայի, Շվեդիայի եւ Ֆինլանդիայի անդամակցության մասին» ակտով</u>	C 241	21	29.08.1994թ.
	(փոփոխված՝ Խորհրդի թիվ 95/1/ԵՀ որոշմամբ, L 001 Եվրատոմ, ԵՊԱՀ)		1	..

[A2](#)

Չեխիայի Հանրապետության, Էստոնիայի

L 236

33 23.09.2003թ

Հանրապետության, Կիպրոսի

Հանրապետության, Լատվիայի

Հանրապետության, Լիտվայի

Հանրապետության, Հունգարիայի

Հանրապետության, Մալթայի

Հանրապետության, Լեհաստանի

Հանրապետության, Սլովենիայի

Հանրապետության եւ Սլովակիայի

Հանրապետության անդամակցության

պայմաններին ու Եվրոպական միության

հիմնադրման մասին համաձայնագրերի

փոփոխություններին վերաբերող ակտով

Ուղղված՝

[►C1](#)

[Ուղղվածը՝ ՊՏ L 176, 20.07.1993թ., էջ 29 \(92/43\)](#)

ԽՈՐՀՐԴԻ 1992 թվականի մայիսի 21-ի 92/43/ԵՏՀ ՀՐԱՀԱՆԳ

Բնական միջավայրերի եւ կենդանական ու բուսական աշխարհի վայրի տեսակների պահպանության մասին

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ, մասնավորապես, դրա 130-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը (2),

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

քանի որ շրջակա միջավայրի որակի պահպանությունը, պաշտպանությունը եւ բարելավումը, այդ թվում՝ բնական միջավայրերի եւ կենդանական ու բուսական աշխարհի վայրի տեսակների պահպանությունը Պայմանագրի 130-րդ հոդվածով սահմանված կարգով Համայնքի կողմից հետապնդող՝ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող կարելուր նպատակներն են,

քանի որ շրջակա միջավայրի վերաբերյալ Եվրոպական Համայնքի քաղաքականությամբ եւ գործողությունների ծրագրով (1987 թվականից մինչեւ 1992 թվականն ընկած ժամանակահատվածի համար) (4) բնության ու բնական ռեսուրսների պահպանության մասով միջոցներ են նախատեսվում,

քանի որ, թեեւ սույն Հրահանգի հիմնական նպատակը կենսաբազմազանության պահպանությունը խթանելն է, հաշվի առնելով տնտեսական, սոցիալական, մշակութային եւ տարածաշրջանային պահանջները, այնուամենայնիվ, Հրահանգը նպաստում է կայուն զարգացման ընդհանուր նպատակին, եւ քանի որ նշված կենսաբազմազանության պահպանությունը կարող է, որոշ դեպքերում, մարդու գործունեության իրականացում կամ իսկապես խթանում պահանջել,

քանի որ անդամ պետությունների Եվրոպական տարածքում բնական միջավայրերը շարունակում են վատթարանալ եւ կենդանական ու բուսական աշխարհի վայրի տեսակների

մեծ մասը կանգնած է լուրջ սպառնալիքի առջեւ, եւ քանի որ, հաշվի առնելով, որ սպառնալիքի առջեւ կանգնած բնական միջավայրերն ու կենդանական եւ բուսական աշխարհի տեսակները կազմում են Համայնքի բնական ժառանգության մասն ու դրանց նկատմամբ սպառնալիքը հաճախ անդրսահմանային բնույթ է կրում, ապա անհրաժեշտ է Համայնքի մակարդակով դրանց պահպանության ուղղությամբ միջոցներ իրականացնել,

քանի որ, հաշվի առնելով բնական միջավայրի որոշ տեսակներին, ինչպես նաեւ կենդանական ու բուսական աշխարհի որոշ տեսակներին ներկայացվող սպառնալիքը, անհրաժեշտ է դրանք սահմանել որպես առաջնահերթ նշանակություն ունեցող տեսակներ՝ դրանք պահպանելու համար միջոցների վաղ իրականացումը խթանելու համար,

քանի որ Համայնքի համար հետաքրքրություն ներկայացնող բնական միջավայրերին կամ տեսակներին դրանց համար վերականգնման կամ պահպանման առումով նպաստավոր կարգավիճակ ապահովելու նպատակով անհրաժեշտ է սահմանել պահպանման ենթակա հատուկ տարածքներ՝ ստեղծելու համար եվրոպական էկոլոգիական փոխկապակցված ցանց՝ սահմանված ժամանակացույցի համաձայն,

քանի որ «Վայրի թռչունների պահպանության մասին» Խորհրդի 1979 թվականի ապրիլի 2-ի թիվ 79/409/ԵՏՀ հրահանգի համաձայն որպես հատուկ պահպանվող տարածքներ սահմանված բոլոր տարածքները, այդ թվում՝ ներկայումս եւ ապագայում այդպիսիք համարվող տարածքները (5) պետք է ներառվեն եվրոպական էկոլոգիական փոխկապակցված ցանցում,

քանի որ նպատակահարմար է յուրաքանչյուր սահմանված տարածքում իրականացնել անհրաժեշտ միջոցներ՝ հաշվի առնելով պահպանության հետապնդվող նպատակները,

քանի որ որպես պահպանման ենթակա հատուկ տարածքներ սահմանվելուն հավակնող տարածքները առաջարկում են անդամ պետությունները, սակայն, քանի որ անհրաժեշտ է, այնուամենայնիվ, ընթացակարգ սահմանել, որով բացառիկ դեպքերում հնարավոր կլինի անդամ պետության կողմից չառաջարկված, սակայն Համայնքի կողմից կարելու համարվող՝ առաջնահերթ նշանակություն ունեցող բնական միջավայրի տեսակի կամ առաջնահերթ նշանակություն ունեցող տեսակների կամ պահպանման, կամ գոյատեւման համար,

քանի որ անհրաժեշտ է պատշաճ կերպով գնահատել ցանկացած պլան կամ ծրագիր, որը հավանական է, որ զգալի ներգործություն կունենա այն տարածքի պահպանման

նպատակների վրա, որը սահմանվել է կամ ապագայում կսահմանվի որպես պահպանման ենթակա հատուկ տարածք,

քանի որ ընդունված է, որ Համայնքի համար հետաքրքրություն ներկայացնող եւ առաջնահերթ նշանակություն ունեցող բնական միջավայրերի կամ առաջնահերթ նշանակություն ունեցող տեսակների պահպանությունը խթանելու համար նախատեսված միջոցների ընդունումը բոլոր անդամ պետությունների ընդհանուր պարտականությունն է, եւ քանի որ դա կարող է, այնուամենայնիվ, որոշ անդամ պետությունների վրա լրացուցիչ ֆինանսական բեռ դնել՝ հաշվի առնելով մի կողմից ամբողջ Համայնքում նշված միջավայրերի եւ տեսակների անհամամասնական բաշխվածությունը եւ, մյուս կողմից, այն հանգամանքը, որ «աղտոտողը վճարում է» սկզբունքը կարող է միայն բնության պահպանության հատուկ դեպքում սահմանափակ կիրառություն ունենալ,

քանի որ, ուստի, համաձայնեցված է, որ նման բացառիկ դեպքում անհրաժեշտ է նախատեսել Համայնքի համաֆինանսավորման տեսքով ներդրումը Համայնքի որոշումներով մատչելի դարձված ռեսուրսների սահմաններում,

քանի որ հողօգտագործման պլանավորման եւ զարգացման քաղաքականությամբ պետք է խթանվի կենդանական ու բուսական աշխարհի վայրի տեսակների համար մեծ կարեւորություն ներկայացնող լանդշաֆտի առանձնահատկությունները,

քանի որ անհրաժեշտ է համակարգ ստեղծել՝ վերահսկելու համար սույն Հրահանգով կարգավորվող բնական միջավայրերի եւ տեսակների պահպանության կարգավիճակը,

քանի որ պաշտպանության ընդհանուր համակարգի առկայությունն անհրաժեշտ է կենդանական ու բուսական աշխարհի որոշ տեսակների համար՝ լրացնելու 79/409/ԵՏՆ հրահանգը, եւ քանի որ անհրաժեշտ է դրույթ նախատեսել որոշ տեսակների կառավարման համար, եթե դրանց պահպանության կարգավիճակը դա թույլ է տալիս, ինչպես նաեւ նրանց բռնելու կամ սպանելու որոշ միջոցներն արգելելու համար՝ միեւնույն ժամանակ նախատեսելով որոշ պայմաններից շեղումների հնարավորություն,

քանի որ, նպատակ ունենալով ապահովելու սույն Հրահանգի իրականացման դիտանցումը, Հանձնաժողովը պետք է պարբերաբար պատրաստի համապարփակ զեկույց, մասնավորապես, հիմնվելով սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային դրույթների կիրառման վերաբերյալ անդամ պետությունների կողմից ուղարկված տեղեկությունների վրա,

քանի որ գիտական ու տեխնիկական գիտելիքների բարելավումն էական է սույն Հրահանգի իրականացման համար եւ քանի որ, հետեւաբար, նպատակահարմար է խթանել անհրաժեշտ հետազոտական ու գիտական աշխատանքը,

քանի որ տեխնիկական ու գիտական առաջընթացը նշանակում է, որ պետք է հնարավոր լինի փոփոխելու հավելվածները, եւ քանի որ անհրաժեշտ է ընթացակարգ սահմանել, որով Հանձնաժողովը կարող է փոփոխել հավելվածները,

քանի որ անհրաժեշտ է ստեղծել կարգավորող կոմիտե, որը կաջակցի Հանձնաժողովին՝ սույն Հրահանգի իրականացման գործում եւ, մասնավորապես, այն դեպքերում, երբ կայացվում են Համայնքի համաֆինանսավորման վերաբերյալ որոշումները,

քանի որ անհրաժեշտ է լրացուցիչ միջոցներ նախատեսել, որոնցով կկարգավորվի կենդանական ու բուսական աշխարհի որոշ էնդեմիկ տեսակների վերաբնակեցումը եւ ոչ էնդեմիկ տեսակների հնարավոր վերաբնակեցումը,

քանի որ կրթությունը եւ սույն Հրահանգի նպատակների մասով ընդհանուր տեղեկությունների մատչելիությունը կարելի է կրճատել՝ դրա արդյունավետ իրականացումն ապահովելու համար.

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Սահմանումները

Հոդված 1

Սույն Հրահանգի նպատակով՝

ա) «պահպանություն» նշանակում է մի շարք միջոցների իրականացում, որն անհրաժեշտ է՝ բնական միջավայրերին եւ կենդանական ու բուսական աշխարհի վայրի պոպուլյացիաներին դրանց համար պահպանման կամ վերականգնման առումով (ե) եւ (i) կետերով սահմանված նպաստավոր կարգավիճակ ապահովելու համար.

բ) «բնական միջավայրեր» նշանակում է աշխարհագրական, աբիոտիկ եւ բիոտիկ առանձնահատկություններով տարբերվող ցամաքային կամ ջրային տարածքներ՝ ամբողջությամբ բնական կամ կիսաբնական.

գ) «Համայնքի համար հեղափոխություն ներկայացնող բնական միջավայրի տեսակներ» նշանակում է բնական միջավայրի այն տեսակները, որոնք, 2-րդ հոդվածում նշված տարածքում՝

i) իրենց բնական տարածքում կանգնած են անհետացման վտանգի առջեւ,

կամ

ii) ունեն փոքր բնական տարածք՝ ռեգրեսիայի ենթարկվելուց հետո կամ, ըստ էության, որոշակի տարածքով սահմանափակված լինելու հետեւանքով,

կամ

▼M3

iii) վառ օրինակներ են՝ արտահայտված հետեւյալ ինը կենսաաշխարհագրական շրջաններից մեկի կամ մեկից ավելի շրջանին բնորոշ առանձնահատկություններով՝ ալպյան, ատլանտյան, սեւծովյան, հյուսիսային, ցամաքային, մակարոնեզյան, միջերկրածովյան, միջդանուբյան եւ տափաստանային:

▼B

Նշված միջավայրի տեսակները թվարկված են կամ կարող են թվարկվել I հավելվածում.

դ) «առաջնահերթ նշանակություն ունեցող բնական միջավայրի տեսակներ» նշանակում է անհետացման վտանգի առջեւ կանգնած բնական միջավայրի այն տեսակները, որոնք գտնվում են 2-րդ հոդվածում նշված տարածքում, եւ որոնց պահպանության համար Համայնքը հատուկ պատասխանատվություն է կրում՝ հաշվի առնելով 2-րդ հոդվածում նշված տարածքում ընդգրկվող բնական տարածքի չափը: Առաջնահերթ նշանակություն ունեցող բնական միջավայրի տեսակները I հավելվածում նշվում են աստղիկով (*).

ե) «բնական միջավայրի պահպանման կարգավիճակ» նշանակում է բնական միջավայրի եւ դրան բնորոշ տեսակների վրա ազդող գործողությունների հանրագումար, որը կարող է ազդել դրա՝ երկարաժամկետ բնական տեղաբաշխվածության, կառուցվածքի եւ ֆունկցիաների, ինչպես նաեւ 2-րդ հոդվածում նշված տարածքում դրան բնորոշ տեսակների երկարաժամկետ գոյատեւման վրա:

►C1 Բնական միջավայրի պահպանման կարգավիճակը ◀ համարվում է «նպաստավոր», երբ՝

- դրա բնական տարածքը եւ այդ տարածքում ընդգրկվող արեաները կայուն կամ զարգացող են, եւ
- առկա են դրա երկարատեւ գոյատեւման համար անհրաժեշտ հատուկ կառուցվածք եւ ֆունկցիաներ ու հավանական է, որ առկա կլինեն կանխատեսելի ապագայում, եւ
- դրան բնորոշ տեսակների պահպանման կարգավիճակը նպաստավոր է, ինչպես սահմանված է (i) կետում.

զ) «*տեսակների բնակության միջավայր*» նշանակում է աբիոտիկ եւ բիոտիկ հատուկ գործոններով ձեւավորված միջավայր, որտեղ տեսակն ապրում է իր կենսացիկլի որեւէ փուլում.

է) «*Համայնքի համար հետաքրքրություն ներկայացնող տեսակ*» նշանակում է այն տեսակը, որը, 2-րդ հոդվածում նշված տարածքում՝

i) վտանգված է, բացառությամբ այն տեսակների, որոնց բնական տարածքն այդ վայրում գտնվում է ծայրամասում, եւ որոնք վտանգված կամ խոցելի չեն Արեւմտյան Պալեարկտիկայի շրջանում, կամ

ii) խոցելի է, այսինքն՝ հավանական է, որ մոտ ապագայում կընդգրկվի վտանգված տեսակների կատեգորիայում, եթե պատճառային գործոնները շարունակեն մնալ, կամ

iii) հազվադեպ են, այսինքն՝ մնացել են փոքր պոպուլյացիաներ, որոնք ներկայումս վտանգված կամ խոցելի չեն, սակայն առկա է ռիսկ, որ կվտանգվեն կամ կդառնան խոցելի: Տեսակները գտնվում են սահմանափակ աշխարհագրական տարածքներում կամ հազվադեպ են հանդիպում ավելի լայն տարածքներում, կամ

iv) էնդեմիկ են եւ պահանջում են հատուկ ուշադրություն՝ պայմանավորված իրենց բնակության միջավայրի հատուկ բնույթով եւ (կամ) բնական միջավայրի վրա՝ դրանց օգտագործման պոտենցիալ ազդեցությամբ եւ (կամ) դրանց պահպանման կարգավիճակի վրա՝ դրանց օգտագործման պոտենցիալ ազդեցությամբ:

Նման տեսակները թվարկված են կամ կարող են թվարկվել II եւ (կամ) IV կամ V հավելվածներում.

ը) «*առաջնահերթ նշանակություն ունեցող տեսակ*» նշանակում է (է) (i) կետում նշված տեսակները, որոնց պահպանման համար Համայնքը հատուկ պատասխանատվություն է

կրում՝ հաշվի առնելով դրանց բնական տարածքի չափը, որն ընկնում է 2-րդ հոդվածում նշված տարածքի մեջ: Նշված *առաջնահերթ նշանակություն ունեցող տեսակը* I հավելվածում նշվում է աստղիկով (*).

թ) «*տեսակի պահպանման կարգավիճակ*» նշանակում է համապատասխան տեսակների առնչությամբ իրականացվող գործողությունների հանրագումար, որը կարող է ազդել 2-րդ հոդվածում նշված տարածքում դրա պոպուլյացիայի երկարաժամկետ բաշխվածության եւ քանակի վրա:

Տեսակի *պահպանման կարգավիճակը* համարվում է «նպաստավոր» եթե՝

- համապատասխան տեսակի պոպուլյացիայի դինամիկայի վերաբերյալ տվյալները ցույց են տալիս, որ այդ տեսակը երկարատեւ ժամկետով պահպանվում է որպես իր բնակության միջավայրերի կենսունակ բաղադրիչներ.
- տեսակի բնական տարածքը ոչ նվազում է, ոչ էլ հավանականություն կա, որ կնվազի կանխատեսելի ապագայում, եւ
- երկարատեւ ժամկետով դրա պոպուլյացիան պահպանելու համար գոյություն ունի եւ հավանական է, որ գոյություն կունենա բավականին խոշոր բնական միջավայր.

ժ) «*տարածք*» նշանակում է աշխարհագրորեն սահմանված տարածք, որի սահմանները հստակ նշված են.

ժա) «*Համայնքի համար կարելոթություն ներկայացնող տարածք*» նշանակում է այն տարածքը, որը կենսաաշխարհագրական շրջանում կամ այն շրջաններում ►C1, որին այն պատկանում է, ◀ զգալիորեն նպաստում է I հավելվածում նշված բնական միջավայրի տեսակին կամ II հավելվածում նշված տեսակներին դրանց համար վերականգնման կամ պահպանման առումով նպաստավոր կարգավիճակ ապահովելուն, ինչպես նաեւ կարող է նաեւ զգալիորեն նպաստել 3-րդ հոդվածում նշված Նատուրա 2000-ի տարածքների էկոհամակարգերի փոխկապակցվածությանը եւ (կամ) զգալիորեն նպաստում է կենսաաշխարհագրական շրջանում կամ համապատասխան շրջաններում կենսաբազմազանության պահպանմանը:

Մեծ տարածքներում կենսամիջավայր ունեցող կենդանական տեսակների դեպքում Համայնքի համար կարելոթություն ներկայացնող տարածքները պետք է համապատասխանեն նշված տեսակների բնական տարածքում այն կենսամիջավայրերին,

որտեղ առկա են նրանց կյանքի եւ վերարտադրության համար կենսական ֆիզիկական կամ կենսաբանական գործոններ.

ժբ) «պահպանման ենթակա հաշուկ տարածք» նշանակում է նորմատիվ, վարչական եւ (կամ) պայմանագրային ակտով անդամ պետությունների կողմից սահմանված՝ Համայնքի համար կարելորություն ներկայացնող տարածք, որտեղ կիրառվում են անհրաժեշտ պահպանման միջոցներ՝ այն բնական միջավայրերին եւ (կամ) տեսակներին դրանց համար վերականգնման կամ պահպանման առումով նպաստավոր կարգավիճակ ապահովելու նպատակով, որոնց հետ կապված, սահմանվել է տարածքը.

ժգ) «նմուշներ» նշանակում է IV եւ V հավելվածներում նշված տեսակներից ցանկացած կենդանի կամ բույս՝ կենդանի կամ մահացած, դրանց որեւէ մասը կամ ածանցյալը, ինչպես նաեւ ցանկացած այլ ապրանք, որին կից փաստաթղթից, փաթեթավորումից կամ նշանից, կամ պիտակից, կամ ցանկացած այլ հանգամանքներից պարզ է դառնում, որ այն այդ տեսակներին պատկանող կենդանիների կամ բույսերի մի մասը կամ ածանցյալն է.

ժդ) «կոմիտե» նշանակում է 20–րդ հոդվածին համապատասխան ստեղծված կոմիտե:

Հոդված 2

1. Սույն Հրահանգի նպատակը Պայմանագրի կողմ հանդիսացող անդամ պետությունների եվրոպական տարածքում բնական միջավայրերի եւ կենդանական ու բուսական աշխարհի վայրի տեսակների պահպանության միջոցով կենսաբազմազանության ապահովմանը նպաստելն է:

2. Սույն Հրահանգի համաձայն ձեռնարկված միջոցները նախատեսված են Համայնքի համար հետաքրքրություն ներկայացնող բնական միջավայրերին եւ կենդանական ու բուսական աշխարհի տեսակներին դրանց համար վերականգնման կամ պահպանման առումով նպաստավոր կարգավիճակ ապահովելու համար:

3. Սույն Հրահանգի համաձայն ձեռնարկված միջոցների դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել տնտեսական, սոցիալական եւ մշակութային պահանջները, ինչպես նաեւ տարածաշրջանային ու տեղական առանձնահատկությունները:

**Բնական միջավայրերի եւ կենդանական ու բուսական աշխարհի տեսակների
բնակության միջավայրերի պահպանությունը**

Հոդված 3

1. Անհրաժեշտ է Նատուրա 2000-ի ներքո ստեղծել պահպանման ենթակա հատուկ տարածքների եվրոպական էկոլոգիական փոխկապակցված ցանց: Առաջին հավելվածում նշված բնական միջավայրի տեսակները, ինչպես նաեւ երկրորդ հավելվածում նշված տեսակների բնակության միջավայրերը ներառող տարածքներից կազմված այս ցանցը հնարավորություն կտա համապատասխան բնական միջավայրերին կամ տեսակներին իրենց բնական տարածքում դրանց համար վերականգնման կամ պահպանման առումով ապահովելու նպաստավոր կարգավիճակ:

Նատուրա 2000-ի ցանցում պետք է ընդգրկվեն թիվ 79/409/ԵՏՀ հրահանգի համաձայն անդամ պետությունների կողմից սահմանված՝ հատուկ պահպանվող տարածքները:

2. Յուրաքանչյուր անդամ պետություն պետք է նպաստի Նատուրա 2000 ցանցի ստեղծմանն այն չափով, որքան առկա են իր տարածքում 1-ին պարբերության մեջ նշված բնական միջավայրի տեսակները եւ տեսակների բնակության միջավայրերը: Այս նպատակով յուրաքանչյուր անդամ պետություն պետք է, 4-րդ հոդվածին համապատասխան, սահմանի տարածքներ՝ որպես պահպանման ենթակա հատուկ տարածքներ՝ հաշվի առնելով 1-ին պարբերության մեջ նշված նպատակները:

3. Անդամ պետությունները, հարկ եղած դեպքում, պետք է ջանք գործադրեն՝ բարելավելու Նատուրա 2000-ի մեջ ընդգրկված տարածքների էկոհամակարգերի փոխկապակցվածությունը՝ պահպանելով եւ, հարկ եղած դեպքում, զարգացնելով 10-րդ հոդվածում նշված՝ կենդանական ու բուսական աշխարհի վայրի տեսակների համար մեծ կարեւորություն ներկայացնող լանդշաֆտի առանձնահատկությունները:

Հոդված 4

1. Երրորդ հավելվածով սահմանված չափորոշիչների (1-ին փուլ) եւ համապատասխան գիտական տեղեկությունների հիման վրա յուրաքանչյուր անդամ պետություն պետք է առաջարկի տարածքների ցանկ եւ նշի I հավելվածի՝ իր տարածքի համար էնդեմիկ համարվող այն բնական միջավայրի տեսակները եւ II հավելվածի այն տեսակները, որոնք ներառված են այդ տարածքներում: Մեծ տարածքներում կենսամիջավայր ունեցող

կենդանական աշխարհի տեսակների տարածքները պետք է համապատասխանեն նշված տեսակների կենսամիջավայրերի տարածքներին, որտեղ առկա են նրանց կյանքի եւ վերարտադրության համար կենսական նշանակություն ունեցող ֆիզիկական կամ կենսաբանական գործոններ: Մեծ տարածքներում կենսամիջավայր ունեցող ջրային օրգանիզմների դեպքում նշված տարածքները կառաջարկվեն միայն այն դեպքում, եթե առկա լինի նրանց կյանքի եւ վերարտադրության համար կենսական նշանակություն ունեցող ֆիզիկական կամ կենսաբանական գործոններով աչքի ընկնող՝ հստակ սահմանվելի տարածք: Անդամ պետությունները հարկ եղած դեպքում պետք է առաջարկեն ցանկում փոփոխություններ կատարել 11-րդ հոդվածում նշված վերահսկողության արդյունքների համաձայն:

Ցանկը պետք է փոխանցվի Հանձնաժողովին սույն Հրահանգի մասին ծանուցելուց հետո երեք տարվա ընթացքում՝ տեղեկություններ ներկայացնելով յուրաքանչյուր տարածքի մասին: Հանձնաժողովի կողմից սահմանված ձեւաչափով, 21-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան, նշված տեղեկությունների մեջ պետք է ընդգրկվեն տարածքի քարտեզը, դրա անվանումը, տեղը, չափը եւ III հավելվածում (1-ին փուլ) նշված չափորոշիչների կիրառման արդյունքում կուտակված տվյալները (1-ին փուլ):

2. III հավելվածով սահմանված չափորոշիչների (2-րդ փուլ) հիման վրա եւ 1 (գ) (iii) հոդվածում նշված ինը կենսաաշխարհագրական շրջաններից յուրաքանչյուրի ►M3 եւ 2 (1) հոդվածում նշված ամբողջ տարածքի շրջանակում Հանձնաժողովը, յուրաքանչյուր անդամ պետության համաձայնությամբ, պետք է անդամ պետությունների ցանկի հիման վրա մշակի Համայնքի համար կարելություն ներկայացնող տարածքների ցանկի նախնական տարբերակը՝ նշելով ►C1 այն տարածքները, որոնք ներառում են առաջնահերթ նշանակություն ունեցող բնական միջավայրի մեկ կամ ավելի տեսակները կամ կենդանական ու բուսական աշխարհի առաջնահերթ նշանակություն ունեցող մեկ կամ ավելի տեսակները:

Անդամ պետությունները, որոնց տարածքները, ներառելով առաջնահերթ նշանակություն ունեցող մեկ կամ մեկից ավելի բնական միջավայրի տեսակներ եւ առաջնահերթ նշանակություն ունեցող տեսակներ, կազմում են իրենց ազգային տարածքի 5 տոկոսը, կարող են, Հանձնաժողովի հետ համաձայնությամբ, պահանջել առավել ճկուն կերպով կիրառել III հավելվածում նշված չափորոշիչները (2-րդ փուլ) իրենց տարածքում գտնվող եւ Համայնքի համար կարելություն ներկայացնող բոլոր տարածքների ընտրության նկատմամբ:

Որպես Համայնքի համար կարելիություն ներկայացնող տարածքներ ընտրված տարածքների ցանկը, միեւնույն ժամանակ նշելով առաջնահերթ նշանակություն ունեցող մեկ կամ մեկից ավելի բնական միջավայրի տեսակներ եւ առաջնահերթ նշանակություն ունեցող տեսակներ ներառող տարածքները, պետք է ընդունվի Հանձնաժողովի կողմից՝ 21-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

3.2-րդ պարբերության մեջ նշված ցանկը պետք է սահմանվի սույն Հրահանգի մասին ծանուցելուց հետո վեց տարվա ընթացքում:

4. Եթե Համայնքի համար կարելիություն ներկայացնող տարածքն ընդունվել է 2-րդ պարբերության մեջ նշված ընթացակարգին համապատասխան, ապա համապատասխան անդամ պետությունը պետք է, հնարավորինս շուտ եւ ամենաուշը վեց տարվա ընթացքում, սահմանի տվյալ տարածքը որպես պահպանման ենթակա հատուկ տարածք՝ սահմանելով առաջնահերթությունները՝ I հավելվածում նշված բնական միջավայրի տեսակներին կամ II հավելվածով սահմանված տեսակներին դրանց համար պահպանման կամ վերականգնման առումով նպաստավոր կարգավիճակ ապահովելու, ինչպես նաեւ Նատուրա 2000-ի մեջ ընդգրկված տարածքների էկոհամակարգերի փոխկապակցվածության գործում տարածքների կարելիության եւ դեգրադացման կամ ոչնչացման սպառնալիքի լույսի ներքո, որի առջեւ կանգնած են տարածքները:

5. Երբ տարածքը ներառվում է 2-րդ պարբերության 3-րդ ենթապարբերության մեջ նշված ցանկում, ապա դրա նկատմամբ կիրառվում է 6 (2), (3) եւ (4) հոդվածը:

Հոդված 5

1. Բացառիկ դեպքերում, երբ Հանձնաժողովը համարում է, որ 4(1) հոդվածում նշված ազգային ցանկում չի նշվել առաջնահերթ նշանակություն ունեցող բնական միջավայրի տեսակը կամ առաջնահերթ նշանակություն ունեցող տեսակը ներառող տարածքը, որը, համապատասխան եւ հուսալի գիտական տեղեկությունների հիման վրա, նա համարում է կարելիոր տվյալ առաջնահերթ նշանակություն ունեցող բնական միջավայրի տեսակի պահպանության կամ տվյալ առաջնահերթ նշանակություն ունեցող տեսակի գոյատեւման համար, ապա տվյալ անդամ պետության եւ Հանձնաժողովի միջեւ սկսվում է երկկողմ խորհրդակցություն՝ համեմատելու համար յուրաքանչյուրի կողմից կիրառվող գիտական տվյալները:

2. Եթե, խորհրդակցության վեց ամիսը չգերազանցող ժամկետի ավարտին վեճը չի լուծվում, ապա Հանձնաժողովը Խորհուրդ առաջարկ է ներկայացնում՝ կապված տարածքի ընտրության հետ՝ որպես Համայնքի համար կարելություն ներկայացնող տարածք:

3. Խորհուրդը, գործելով միաձայն, որոշում է կայացնում իրեն դիմելուց հետո երեք ամսվա ընթացքում:

4. Խորհրդակցության ժամկետի ընթացքում եւ մինչեւ Խորհրդի կողմից որոշում կայացնելը, համապատասխան տարածքի նկատմամբ կիրառվում է 6(2) հոդվածը:

Հոդված 6

1. Պահպանման ենթակա հատուկ տարածքների համար անդամ պետությունները պետք է սահմանեն պահպանման անհրաժեշտ միջոցներ, որոնք, հարկ եղած դեպքում, ներառում են տարածքների համար հատկապես նախատեսված համապատասխան կառավարման պլաններ, կամ որոնք ներառված են զարգացման այլ պլանների մեջ, ինչպես նաեւ պետք է սահմանեն նորմատիվ, վարչական կամ պայմանագրային համապատասխան միջոցներ, որոնք համապատասխանում են տվյալ տարածքում առկա՝ I հավելվածում նշված բնական միջավայրի տեսակների եւ II հավելվածում նշված տեսակների էկոլոգիական պահանջներին:

2. Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն համապատասխան քայլեր՝ խուսափելու պահպանման ենթակա հատուկ տարածքներում բնական միջավայրերի եւ տեսակների բնակության միջավայրերի վատթարացումից, ինչպես նաեւ այն տեսակներին անհանգստություն պատճառելուց, որոնց համար սահմանվել են տարածքները, եթե նրանց անհանգստություն պատճառելը կարող է զգալի լինել՝ պայմանավորված սույն Հրահանգի նպատակներով:

3. Տարածքի կառավարման հետ ուղղակիորեն չառնչվող կամ դրա համար անհրաժեշտ չհամարվող ցանկացած պլան կամ ծրագիր, որը հավանական է, որ ազդեցություն կունենա տարածքի վրա կամ առանձին կամ այլ պլանների ու ծրագրերի հետ միասին, պետք է ենթարկվի համապատասխան գնահատման՝ կապված տարածքի վրա ունեցող դրա հետեւանքների հետ՝ հաշվի առնելով տարածքի պահպանման նպատակները: Տարածքի վրա թողած հետեւանքների գնահատման եզրակացությունների հիման վրա եւ պահպանելով 4-րդ պարբերության դրույթները՝ իրավասու ազգային մարմինները պետք է

համաձայնեն պլանի կամ ծրագրի հետ միայն այն բանից հետո, երբ համոզվեն, որ այն բացասաբար չի անդրադառնա համապատասխան տարածքի ամբողջականության վրա եւ, հարկ եղած դեպքում, եթե ստանան լայն հասարակության կարծիքը:

4. Եթե հանրային գերակա շահ ճանաչելու, այդ թվում՝ սոցիալական կամ տնտեսական բնույթի պատճառների հիմքով որոշվի, որ պլանը կամ ծրագիրը պետք է, այնուամենայնիվ, իրականացվի, չնայած այն հանգամանքին, որ դրանք կարող են բացասական հետեւանքներ ունենալ տարածքի վրա, ապա անդամ պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր փոխհատուցման միջոցները, որոնք անհրաժեշտ են՝ ապահովելու համար Նատուրա 2000-ի մեջ ընդգրկված տարածքների էկոհամակարգերի ընդհանուր փոխկապակցվածության պաշտպանությունը: Այն Հանձնաժողովին տեղեկացնում է ընդունված փոխհատուցման միջոցների մասին:

Եթե համապատասխան տարածքում ընդգրկվում են առաջնահերթ նշանակություն ունեցող բնական միջավայրի տեսակ եւ (կամ) առաջնահերթ նշանակություն ունեցող տեսակ, միակ դիտարկումները, որոնք կարող են լինել, մարդու առողջության կամ հանրային անվտանգության, շրջակա միջավայրի համար առաջնային կարեւորություն ունեցող օգտակար հետեւանքների կամ, Հանձնաժողովի եզրակացությունն ստանալուց հետո, հանրային գերակա շահ ճանաչվելու հիմքի հետ կապված դիտարկումներն են:

Հոդված 7

Սույն Հրահանգի 6(2), (3) եւ (4) հոդվածից բխող պարտավորությունները փոխարինում են 79/409/ԵՀՏ հրահանգի 4(4) հոդվածի առաջին նախադասությունից բխող ցանկացած պարտավորությանը՝ ստանձնված դրա 4 (1) հոդվածի համաձայն դասակարգված կամ 4 (2) հոդվածով ճանաչված տարածքների մասով՝ սկսած սույն Հրահանգի իրականացման ամսաթվից կամ 79/409/ԵՀՏ հրահանգի համաձայն անդամ պետությունների կողմից դասակարգման կամ ճանաչման ամսաթվից, եթե վերջին ամսաթիվն ավելի ուշ է:

Հոդված 8

1. Անդամ պետությունները հարկ եղած դեպքում պետք է, որպես պահպանման ենթակա հատուկ տարածքներ սահմանվելուն հավակնող ու առաջնահերթ նշանակություն ունեցող բնական միջավայրի տեսակները եւ (կամ) առաջնահերթ նշանակություն ունեցող

տեսակները ներառող տարածքների մասին իրենց առաջարկներին զուգահեռ, Հանձնաժողով ուղարկեն իրենց նախահաշիվները՝ Համայնքի համաֆինանսավորում ստանալու համար, որը նրանք անհրաժեշտ են համարում՝ 6 (1) հոդվածի համաձայն իրենց պարտավորությունները կատարելու համար:

2. Հանձնաժողովը, համապատասխան անդամ պետություններից յուրաքանչյուրի համաձայնությամբ, պետք է սահմանի Համայնքի համար կարելիություն ներկայացնող եւ համաֆինանսավորում պահանջող տարածքների նկատմամբ կիրառելիք այն միջոցները, որոնք էական են՝ համապատասխան տարածքում առաջնահերթ նշանակություն ունեցող բնական միջավայրի տեսակներին եւ տվյալ տարածքում առաջնահերթ նշանակություն ունեցող տեսակներին դրանց պահպանության կամ վերահաստատման առումով նպաստավոր կարգավիճակ ապահովելու համար, ինչպես նաեւ պետք է սահմանի նշված միջոցներից բխող ընդհանուր ծախսերը:

3. Հանձնաժողովը, համապատասխան անդամ պետությունների համաձայնությամբ, պետք է գնահատի 2-րդ պարբերության մեջ նշված միջոցների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորման՝ ներառյալ համաֆինանսավորման չափը՝ հաշվի առնելով, ի թիվս այլոց, առաջնահերթ նշանակություն ունեցող բնական միջավայրի տեսակների եւ (կամ) առաջնահերթ նշանակություն ունեցող տեսակների՝ անդամ պետության տարածքում կենտրոնացվածությունը եւ անհրաժեշտ միջոցների իրականացումից բխող հարաբերական բեռը:

4. Երկրորդ եւ երրորդ պարբերությունների մեջ նշված գնահատման համաձայն՝ Հանձնաժողովը պետք է ընդունի, հաշվի առնելով Համայնքի համապատասխան փաստաթղթերի համաձայն ֆինանսավորման առկա աղբյուրները եւ 21-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն, համաֆինանսավորում պահանջող միջոցների իրականացման համար անհրաժեշտ առաջնահերթ գործողությունների շրջանակը, երբ տարածքը, 4 (4) հոդվածի համաձայն, սահմանվել է որպես պահպանման ենթակա հատուկ տարածք:

5. Բավարար ռեսուրսների բացակայության պատճառով գործողությունների շրջանակում չընդգրկված միջոցների, ինչպես նաեւ նշված գործողությունների շրջանակում ընդգրկված, սակայն անհրաժեշտ համաֆինանսավորում կամ միայն մասամբ համաֆինանսավորում ստացած միջոցների հարցը պետք է կրկին քննարկվի՝ 21-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան, գործողությունների ծրագիրը երկու տարուց հետո

վերանայելու ժամանակ եւ կարող է, միեւնոյն ժամանակ, հետաձգվել մինչեւ անդամ պետությունների կողմից նշված վերանայման իրականացումը: Վերանայման ժամանակ հաշվի է առնվում, հարկ եղած դեպքում, համապատասխան տարածքի նոր վիճակը:

6. Այն տարածքներում, որտեղ համաֆինանսավորում պահանջող միջոցների իրականացումը հետաձգվում է, անդամ պետությունները չպետք է ձեռնարկեն ցանկացած նոր միջոց, որը հավանական է, որ կհանգեցնի նշված տարածքների վատթարացմանը:

Հոդված 9

Հանձնաժողովը, գործելով 21-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան, պետք է պարբերաբար վերանայի, թե արդյոք Նատուրա 2000-ը նպաստում է 2-րդ եւ 3-րդ հոդվածով սահմանված նպատակների իրագործմանը: Այս համատեքստում պահպանման ենթակա հատուկ տարածքը կարող է հանվել առաջնահերթ նշանակություն ունեցող տարածքների ցանկից, եթե 11-րդ հոդվածով նախատեսված վերահսկողության արդյունքում արձանագրված բնական զարգացումները դա թույլ են տալիս:

Հոդված 10

Անդամ պետությունները պետք է ջանան, անհրաժեշտ համարելու դեպքում, իրենց հողօգտագործման պլանավորման եւ զարգացման քաղաքականությամբ ու, մասնավորապես, Նատուրա 2000-ում ընդգրկված տարածքների էկոհամակարգերի փոխկապակցվածությունը բարելավելու նպատակով, խթանել կենդանական ու բուսական աշխարհի վայրի տեսակների համար մեծ կարեւորություն ունեցող լանդշաֆտի առանձնահատկությունների կառավարումը:

Նշված առանձնահատկություններն այն առանձնահատկություններն են, որոնք իրենց գծային եւ շարունակական կառուցվածքի (ինչպես օրինակ՝ գետերն իրենց ափերով կամ դաշտի սահմանները նշելու ավանդական համակարգերը) կամ անցման քարի (ինչպես, օրինակ՝ լճակները կամ փոքր անտառները) գործառույթի հիման վրա, կարեւոր են վայրի տեսակների միգրացիայի, տարածման եւ գենետիկական տեղեկատվության փոխանակման համար:

Հոդված 11

Անդամ պետությունները պետք է իրականացնեն 2-րդ հոդվածում նշված՝ բնական միջավայրերի եւ տեսակների պահպանության կարգավիճակի վերահսկողություն՝ հատուկ ուշադրություն դարձնելով առաջնահերթ նշանակություն ունեցող բնական միջավայրի տեսակների եւ առաջնահերթ նշանակություն ունեցող տեսակների վրա:

Տեսակների պաշտպանությունը

Հոդված 12

1. Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ ստեղծելու համար IV (ա) հավելվածում նշված կենդանական աշխարհի տեսակների խիստ պաշտպանության համակարգ՝ իրենց բնական տարածքում՝ արգելելով՝

ա) վայրի բնությունից նշված տեսակների նմուշները միտումնավոր բռնելու կամ սպանելու բոլոր ձեւերը.

բ) նշված տեսակներին միտումնավոր անհանգստություն պատճառելը, հատկապես բազմացման, աճեցման եւ ծմեռային քնի ու միգրացիայի շրջանում.

գ) ձվերը միտումնավոր ոչնչացնելը կամ դրանք վայրի բնությունից հավաքելը.

դ) բազմացման կամ հանգստի տեղանքներին միտումնավոր վնաս հասցնելը կամ դրանք ավերելը:

2. Նշված տեսակների դեպքում անդամ պետությունները պետք է արգելեն վայրի բնությունից վերցված նմուշների պահումը, տեղափոխումը եւ վաճառքը կամ փոխանակումը, ինչպես նաեւ վաճառքի կամ փոխանակման համար դրանք առաջարկելը, բացառությամբ այն նմուշների, որոնք, նախքան սույն Հրահանգի իրականացումը, վերցվել են օրենքով սահմանված կարգով:

3. 1 (ա) եւ (բ) եւ 2-րդ պարբերության մեջ նշված արգելքը պետք է կիրառվի սույն Հոդվածով կարգավորվող կենդանիների կյանքի բոլոր փուլերի ընթացքում:

4. Անդամ պետությունները պետք է ստեղծեն IV (ա) հավելվածում նշված կենդանական աշխարհի տեսակներին պատահական բռնելը կամ սպանելը դիտանցելու համակարգ: Հավաքված տեղեկությունների հիման վրա անդամ պետությունները պետք է հետազայում

հետազոտություն կատարեն կամ պահպանությանն ուղղված միջոցներ ձեռնարկեն՝ կանխելու համար պատահական բռնելու կամ սպանելու հետեանքով պատճառված զգալի բացասական ազդեցությունը համապատասխան տեսակների վրա:

Հոդված 13

1. Անդամ պետությունները պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն՝ ստեղծելու համար IV (բ) հավելվածում նշված բուսական աշխարհի տեսակների խիստ պաշտպանության համակարգ իրենց բնական տարածքում՝ արգելելով՝

ա) նշված բույսերը դիտավորությամբ պոկելը, հավաքելը, կտրելը կամ արմատախիլ անելը, կամ վայրի բնության մեջ իրենց բնական տարածքում ոչնչացնելը.

բ) վայրի բնությունից վերցված տեսակների նմուշները պահելը, տեղափոխելը եւ վաճառքը կամ փոխանակումը, ինչպես նաեւ վաճառքի կամ փոխանակման համար դրանք առաջարկելը, բացառությամբ այն նմուշների, որոնք, նախքան սույն Հրահանգի իրականացումը, վերցվել են օրենքով սահմանված կարգով:

2. 1 (ա) եւ (բ) պարբերության մեջ նշված արգելքը պետք է կիրառվի սույն Հոդվածով կարգավորվող բույսերի կենսացիկլի բոլոր փուլերի ընթացքում:

Հոդված 14

1. Եթե անդամ պետությունները 11-րդ հոդվածով նախատեսված վերահսկողության համաձայն հարկ են համարում, ապա նրանք պետք է միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու համար, որ վայրի բնությունից՝ V հավելվածում նշված կենդանական եւ բուսական աշխարհի վայրի տեսակներից նմուշները վերցնելը, ինչպես նաեւ դրանց օգտագործումը, համահունչ լինեն դրանց պահպանման առումով նպաստավոր կարգավիճակ ապահովելու հետ:

2. Եթե անհրաժեշտություն է առաջանում իրականացնել նշված միջոցները, ապա անհրաժեշտ է նաեւ շարունակել 11-րդ հոդվածով նախատեսված վերահսկողության իրականացումը: Նշված միջոցները կարող են, մասնավորապես, ներառել նաեւ՝

– կանոնակարգեր՝ կապված որոշ օբյեկտների մատչելիության հետ.

– վայրի բնությունից նմուշների վերցման եւ որոշ պոպուլյացիաների օգտագործման ժամանակավոր կամ տեղական արգելք.

- նմուշների վերցման ժամկետների եւ (կամ) մեթոդների կարգավորումը.
- նմուշների վերցման ժամանակ որսի եւ ձկնորսության կանոնների կիրառումը, որոնք հաշվի են առնում նշված պոպուլյացիաների պահպանումը.
- նմուշներ վերցնելու համար լիցենզիաների ստացման համակարգի ստեղծում կամ չափաքանակների սահմանում.
- նմուշները գնելու, վաճառելու, վաճառքի համար առաջարկելու, վաճառքի համար պահելու կամ վաճառքի համար տեղափոխելու կանոնակարգերը.
- կենդանական տեսակների՝ անազատ պայմաններում բուծումը, ինչպես նաեւ բուսական տեսակների արհեստականորեն աճեցումը խիստ հսկողության պայմաններում՝ նպատակ ունենալով կրճատելու վայրի նմուշներ վերցնելը.
- ընդունված միջոցների ազդեցության գնահատումը:

Հոդված 15

V (ա) հավելվածում նշված կենդանական աշխարհի վայրի տեսակներ բռնելու կամ սպանելու դեպքերում, ինչպես նաեւ այն դեպքերում, երբ 16-րդ հոդվածին համապատասխան, շեղումներ են կիրառվում IV (ա) հավելվածում նշված տեսակները վերցնելու, բռնելու կամ սպանելու նկատմամբ, ապա անդամ պետությունները պետք է արգելեն ինչպես բոլոր այն խտրական միջոցների կիրառումը, որոնք կարող են հանգեցնել նշված տեսակների պոպուլյացիաների վերացմանը կամ դրանց լուրջ անհանգստացնելուն, այնպես էլ՝

ա) VI (ա) հավելվածում նշված՝ բռնելու եւ սպանելու միջոցների կիրառումը.

բ) VI (բ) հավելվածում նշված՝ տրանսպորտային միջոցներից բռնելու եւ սպանելու ցանկացած ձեւ:

Հոդված 16

1. Եթե բավարար այլընտրանքային այլ տարբերակ չկա եւ շեղումը չի վնասի համապատասխան տեսակների պոպուլյացիաներին իրենց բնական տարածքում դրանց պահպանության առումով նպաստավոր կարգավիճակ ապահովելուն, ապա անդամ պետությունները կարող են շեղում կատարել 12, 13, 14 եւ 15 (ա) ու (բ) հոդվածների դրույթներից՝

ա) ելնելով կենդանական ու բուսական աշխարհի վայրի տեսակների պաշտպանության եւ բնական միջավայրերի պահպանության շահերից.

բ) մշակաբույսերին, անասուններին, անտառներին, ձկնաբուծարաններին եւ ջրին ու մյուս տեսակների օբյեկտներին սպառնացող լուրջ վտանգը կանխելու համար.

գ) ելնելով հանրային առողջության եւ անվտանգության շահերից կամ հանրային գերակա շահ ճանաչելու հիմքերից, այդ թվում՝ սոցիալական կամ տնտեսական բնույթի պատճառներից ու շրջակա միջավայրի համար առաջնային կարեւորություն ունեցող օգտակար հետեւանքներից.

դ) հետազոտության եւ կրթության, նշված տեսակների պոպուլյացիայի թվակազմի վերականգնման եւ վերաբնակեցման ու այդ նպատակներով բուծման, այդ թվում՝ բույսերի արհեստականորեն աճեցման համար.

ե) խստորեն վերահսկվող պայմաններում եւ ընտրություն կատարելու սկզբունքով եւ սահմանափակ չափով իրավասու ազգային մարմինների կողմից սահմանված սահմանափակ քանակով IV հավելվածում նշված տեսակների որոշ նմուշներ վերցնելը, պահելը թույլատրելու համար:

2. Անդամ պետությունները պետք է, յուրաքանչյուր երկու տարին մեկ, Կոմիտեի կողմից սահմանված ձեւաչափին համապատասխան, Հանձնաժողով զեկույց ներկայացնեն 1-ին պարբերության համաձայն կիրառվող շեղումների մասին: Հանձնաժողովը պետք է ներկայացնի իր կարծիքը նշված շեղումների վերաբերյալ զեկույցն ստանալուց հետո առավելագույնը 12 ամսվա ընթացքում եւ հաշվետվություն ներկայացնի Կոմիտե:

3. Զեկույցում պետք է նշվեն՝

ա) այն տեսակները, որոնց մասով կիրառվում են շեղումները եւ շեղումներ կատարելու պատճառները՝ ներառյալ ռիսկի բնույթը, ինչպես նաեւ, հարկ եղած դեպքում, մերժված այլընտրանքային տարբերակները եւ օգտագործված գիտական տվյալները.

բ) կենդանական տեսակներին բռնելու կամ սպանելու համար թույլատրվող միջոցները, գործիքները կամ մեթոդները եւ դրանց օգտագործման պատճառները.

գ) այն հանգամանքները, թե երբ եւ որտեղ են շնորհվել շեղումները.

դ) այն մարմինը, որն իրավասու է հայտարարելու եւ ստուգելու, թե անհրաժեշտ որ պայմաններն են բավարարվել եւ որոշել կիրառվելիք միջոցները, գործիքները կամ

մեթոդները, դրանց օգտագործման սահմանները եւ օգտագործող գործակալությունները եւ այն անձանց, ովքեր ►[CI](#) կարող են կատարել այդ ◀առաջադրանքը.

ե) կիրառված վերահսկիչ միջոցները եւ ստացված արդյունքները:

Տեղեկատվությունը

Հոդված 17

1. 23(1) հոդվածով սահմանված ամսաթվի ավարտից հետո յուրաքանչյուր վեց տարին մեկ անգամ անդամ պետությունները սույն Հրահանգի համաձայն ձեռնարկված միջոցների իրականացման մասին զեկույց պետք է կազմեն: Նշված զեկույցում պետք է, մասնավորապես, ներառվեն 6 (1) հոդվածում նշված պահպանման միջոցների, ինչպես նաեւ ձեռնարկված միջոցների՝ I հավելվածում նշված բնական միջավայրի տեսակների եւ II հավելվածում նշված տեսակների պահպանման կարգավիճակի վրա ունեցած ազդեցության գնահատման ու 11-րդ հոդվածում նշված վերահսկողության հիմնական արդյունքների մասին տեղեկություններ: Կոմիտեի կողմից սահմանված ձեռնարկի համաձայն պատրաստված զեկույցը պետք է ներկայացվի Հանձնաժողով եւ մատչելի դարձվի հանրությանը:

2. Հանձնաժողովը պետք է 1-ին պարբերության մեջ նշված զեկույցների հիման վրա պատրաստի համապարփակ զեկույց: Զեկույցում պետք է ներառվեն արձանագրված առաջընթացի եւ, մասնավորապես, 3-րդ հոդվածում նշված նպատակների իրագործման հարցում Նատուրա 2000-ի ունեցած ներդրման համապատասխան գնահատման արդյունքները: Զեկույցի՝ անդամ պետության կողմից տրամադրված տեղեկությունները ներառող մասի նախնական տարբերակը պետք է ներկայացվի համապատասխան անդամ պետություն՝ ստուգման նպատակով: Կոմիտեին տրամադրելուց հետո Հանձնաժողովը պետք է հրապարակի զեկույցի վերջնական տարբերակը 1-ին պարբերության մեջ նշված զեկույցներն ստանալուց հետո ոչ ուշ, քան երկու տարվա ընթացքում եւ պետք է ներկայացնի անդամ պետություններ, Եվրոպական պառլամենտ, Խորհուրդ ու Եվրոպական եւ սոցիալական հարցերով կոմիտե:

3. Անդամ պետությունները կարող են նշել սույն Հրահանգով սահմանված տարածքները կոմիտեի կողմից այդ նպատակի համար նախատեսված՝ Համայնքի ծանուցումների միջոցով:

Հետազոտությունը

Հոդված 18

1. Անդամ պետությունները եւ Հանձնաժողովը պետք է խթանեն անհրաժեշտ հետազոտական ու գիտական աշխատանքների իրականացումը՝ հաշվի առնելով 2-րդ հոդվածով սահմանված նպատակները եւ 11-րդ հոդվածում նշված պարտավորությունը: Նրանք պետք է տեղեկություններ փոխանակեն՝ պատշաճ կերպով համակարգելու համար անդամ պետության եւ Համայնքի մակարդակով իրականացվող հետազոտական աշխատանքները:

2. Հատուկ ուշադրություն պետք է դարձվի 4-րդ եւ 10-րդ հոդվածների իրականացման համար անհրաժեշտ գիտական աշխատանքին, ինչպես նաեւ պետք է խթանվի անդամ պետությունների միջեւ անդրսահմանային համագործակցային հետազոտությունը:

Հավելվածներում փոփոխություններ կատարելու ընթացակարգը

Հոդված 19

Խորհուրդը, գործելով որակյալ մեծամասնությամբ, Հանձնաժողովի առաջարկի հիման վրա ընդունում է այնպիսի փոփոխություններ, որոնք անհրաժեշտ են՝ I, II, III, V եւ VI հավելվածները տեխնիկական ու գիտական առաջընթացին համապատասխանեցնելու համար:

Խորհուրդը, գործելով որակյալ մեծամասնությամբ, Հանձնաժողովի առաջարկի հիման վրա ընդունում է այնպիսի փոփոխություններ, որոնք անհրաժեշտ են՝ IV հավելվածը տեխնիկական եւ գիտական առաջընթացին համապատասխանեցնելու համար:

Կոմիտեն

▼M2

Հոդված 20

Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն:

Հոդված 21

1. Երբ հղում է կատարվում սույն հոդվածին, ապա կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ (6) որոշման 5-րդ եւ 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով սահմանված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

2. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

▼B

Լրացուցիչ դրույթներ

Հոդված 22

Սույն Հրահանգի դրույթներն իրականացնելիս անդամ պետությունները պետք է՝

ա) ուսումնասիրեն IV հավելվածում նշված՝ իրենց տարածքի համար էնդեմիկ տեսակի վերաբնակեցման ցանկությունը, եթե դա կարող է նպաստել դրանց պահպանմանը՝ պայմանով, որ ուսումնասիրության արդյունքում, հաշվի առնելով նաեւ այլ անդամ պետությունների կամ այլ վայրում ձեռք բերված փորձը, պարզ կդառնա, որ վերաբնակեցումն արդյունավետորեն կնպաստի նշված տեսակներին պահպանման առումով նպաստավոր կարգավիճակի վերահաստատման ապահովմանը, եւ որ այն տեղի կունենա միայն համապատասխան հանրության հետ պատշաճ կերպով խորհրդակցելուց հետո.

բ) ապահովեն, որ իրենց տարածքում էնդեմիկ չհամարվող ցանկացած տեսակի՝ դիտավորությամբ վայրի բնության մեջ բնակեցումը կարգավորվի, որպեսզի իրենց բնական տարածքում չվնասեն բնական միջավայրերը կամ կենդանական ու բուսական աշխարհի էնդեմիկ վայրի տեսակները եւ, հարկ եղած դեպքում, արգելեն բնակեցումը: Իրականացված գնահատման արդյունքները պետք է ներկայացվեն Կոմիտե՝ որպես ի գիտություն.

գ) խթանեն կրթությունը եւ մատչելի դարձնեն կենդանական ու բուսական աշխարհի վայրի տեսակները պաշտպանելու, ինչպես նաեւ դրանց բնակության միջավայրերը եւ բնական միջավայրերը պահպանելու անհրաժեշտության վերաբերյալ ընդհանուր տեղեկությունները:

Եզրափակիչ դրույթներ

Հոդված 23

1. Անդամ պետությունները սույն Հրահանգի պահանջները կատարելու համար անհրաժեշտ իրավական ակտերը, կանոնակարգերը եւ վարչական ակտերը գործողության մեջ են դնում դրա մասին ծանուցելուց հետո երկու տարվա ընթացքում: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:
2. Երբ անդամ պետություններն ընդունում են նշված միջոցները, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում ուղեկցվեն նման հղումով: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:
3. Անդամ պետությունները պետք է Հանձնաժողով ներկայացնեն ազգային իրավունքի հիմնադրույթները, որոնք ընդունվում են իրենց կողմից սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

Հոդված 24

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

[▼M3](#)

ՀԱՎԵԼՎԱԾ I

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՈՐՈՆՑ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՏՈՒԿ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Մեկնաբանություն

Բնական միջավայրերի մեկնաբանության վերաբերյալ ուղղությունը տրված է «Եվրոպական միության բնական միջավայրերի մեկնաբանման ձեռնարկ»-ում, որը հաստատվել է 20-րդ հոդվածի համաձայն ստեղծված կոմիտեի կողմից («Բնական միջավայրերի հարցերով կոմիտե») եւ հրատարակվել է Եվրոպական հանձնաժողովի կողմից ([7](#)):

Ծածկագիրը համապատասխանում է Նատուրա 2000-ի ծածկագրին:

«*» նշանը նշում է առաջնահերթ նշանակություն ունեցող բնական միջավայրի տեսակները:

1.ԱՓԱՄԵՐՁ ԵՎ ԱՂՈՒՏԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԵՐ

11. Բաց ծովի եւ մակընթացության ու տեղատվության գոտիներ

- 1110 Ավազի առափնյա ծանծաղուտը, որը մշտապես աննշան ծածկված է ծովի ջրով

- 1120 * *Պոսիդոնիայի ծանծաղուտներ (Posidonion oceanicae)*

- 1130 Էստուարներ (գետաբերանաձոցեր)

